ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ-11

ք. Երևան 21.10. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «Էյ Ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոց» ՍՊԸ-ն, ի դեմս ՍՊԸ-ի տնօրեն՝ Անուշ Կոստանյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը՝ «Սմարթ բիզնես» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2 106 205 (երկու միլիոն հարյուր վեց հազար երկու հարյուր հինգ) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության

գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և

կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 2021 թվականի հոկտեմբերի 15-ից 2021 թվականի դեկտեմբերի 15-ն է, իսկ հաշվետվությունների ընդունման ժամկետը՝ մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ը:

7.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2021 թվականի հոկտեմբերի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Էյ Ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոց»
ՍՊԸ ք. Երևան, Նոր Նորքի գ.,
Մոլդովական 25/2, բն. 10
Էլ. փոստ՝ aww@virtualschool.am

«ԱՅ ԴԻ բանկ»
Հ/Հ 11815012847800, ՀՎՀՀ00929827
Կատարողի ստորագրությունը
ՍՊԸ -ի տնօրեն՝
Անուշ Կոտանյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 1
2021թ. հոկտեմբերի 21 -ին
կնքված N ԵՔ-ԴՄ- 11 պայմանագրի

«Սմարթ բիզնես»
դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն

Այսօր աշխարհի գրեթե բոլոր երկրներում, առավել ևս Հայաստանում կենսական է

1. համատարած գործազրկության[1] (որն առաջիկայում ավելի ու ավելի է տարածվելու տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ) հիմնախնդիրը, դրանից բխող բազմաթիվ սոցիալական հետևանքներով,

2. համայնքներում ռեսուրսների անհասանելիության, խոշոր քաղաքներում դրանց կենտրոնացման և համայնքների անհավասարաչափ զարգացման հարցերը,

3. տեխնոլոգիաների ինտեգրման միջոցով բիզնեսների ծախսարդյունավետությունը բազմակի անգամներ բարձրացնելու խնդիրը, ինչն իր հերթին նպաստում է բիզնեսների մրցունակության բարձրացումը:

Թեև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բազմաթիվ ծրագրերի միջոցով տարատեսակ աջակցություն է ցուցաբերվում և՛ համայնքներին, և՛ անհատներին խթանելու ձեռնարկատիրության զարգացումը վերոնշյալ առաջին հիմնախնդիրը լուծելու համար, բայց այդ ծրագրերը բոլորին հասանելի չեն. սահմանափակ են տարածության և ժամանակի մեջ, ինչպես նաև հաճախ մրցույթներում սահմանված չափանիշների պատճառով շատ կազմակերպություններ և անհատներ ընդհանրապես չեն կարողանում օգտվել այդ հնարավորություններից, մինչդեռ որոշները բազմաթիվ անգամներ օգտվում են տարբեր ծրագրերից, դրամաշնորհներից և ռեսուրսներից: Այսպիսով հաջողություններ գրանցելու համար ավելի շատ անհրաժեշտ են առանց սահմանափակումների միշտ հասանելի (ոչ թե միայն որևէ դասընթացի կամ ծրագրի շրջանակներում) ուղղորդող ուսուցողական ռեսուրսներ, ձեռնարկատիրական գիտելիքներ, որոշակի գործիքակազմ, աջակցություն բիզնեսներում տեխնոլոգիաների ինտեգրման հարցում նաև կազմակերպությունների հիմնադրման սկզբնական փուլերում (2-րդ և 3-րդ հիմնախնդիրներ) քան պարզապես ֆինանսական աջակցություն, մեծ ներդրումներ:

Հարկ է նշել, որ SM'ART BUSINE$$ հավելվածի ներգործությունը շատ ավելին է. այն ոչ միայն լուծում է վերը թվարկված հիմնախնդիրներ, կարևոր և օգտակար է ձեռնարկատիրությամբ հետաքրքրվող/զբաղվող անհատների համար և շարունակական է լինելու սույն ծրագրի ավարտից հետո 24/7 ռեժիմով, այլ ծրագրի գերագույն նպատակն է դնել խելացի տնտեսության (smart economy) հիմքերը:

Կազմակերպության փորձառությունը

Էյ Ընդ Դարլու Դաբլու միրտուալ դպրոցի առաքելությունն է տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով կրթական ռեսուրսները և ծրագրերը հասանելի դարձնել հնարավորինս շատ շահառուների առանց տարածքային սահմանափակումների՝ նպաստելով երկրի համաչափ զարգացմանը, արդիականացնել կրթությունը:

Էյ Ընդ Դաբլու Դաբլու միրտուալ դպրոցն իր գործունեության ընթացքում իրականացրել է նման ձևաչափով տարբեր բնույթի անվճար նախագծեր սեփական միջոցներով (այդ թվում նաև SM'ART BU$INE$$ հավելվածի մշակումն իրականացվել է սեփական միջոցներով):

Այսպիսով, իրականացված մի քանի սոցիալական նշանակության նախագծեր.

---

[1] Ըստ վիճակագրական տվյալների օրինակ ԱՄՆ-ի պես զարգացած տնտեսություն ունեցող երկրում գործազրկությունը 2019-2030թթ-ին լինելու է 4,5 %, Հայաստանի Հանրապետությունում նման կանխատեսումներ դեռևս չկան:

- EDUvirtualEXPO – 3-օրյա վիրտուալ ցուցահանդես կրթության ոլորտի վերաբերյալ, որին մասնակից կրթական տարբեր հաստատություններ առցանց հարթակում ներկայացրեցին իրենց կրթական հաստատությունները, կրթության մեջ կիրառվող կամ իրենց կողմից առաջարկվող տեխնոլոգիական լուծումները, քննարկվեցին հանրությանը հուզող տարբեր կարևոր հարցեր (20-22 փետրվար 2020թ.- միջոցառման ձայնագրությունները հասանելի են համացանցում՝ մեր սոցիալական էջերում):

- վիրավորված զինծառայողների վերապատրաստման սոցիալական ծրագիր (առցանց) անհատ բարեգործների համաֆինանսավորմամբ, որը ներկայումս ընթացքի մեջ է (2016թ-ից մինչ այսօր),

- «Վերա՛մասնագիտացում» առցանց միջոցառման նպատակն էր մասնակիցներին տեղեկացնել աշխատանքի նոր հնարավորությունների մասին և աջակցել նրանց վերամասնագիտացման հարցում (այս նախագիծը շարունակական է և առաջիկայում՝ 09.09.2021թ-ին կրկնվելու է, իսկ մոտ ապագայում նաև լինելու է հավելվածի տեսքով իր համապատասխան գործիքակազմով),

- «Դպրոցը Ձեր տանը» առցանց նախագծի ընթացքում էյ Ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոցի մասնագետների շնորհիվ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված հանրային դպրոցների փակման սկզբնական շրջանում տանը մեկուսացած երեխաների համար կազմակերպվեցին դասընթացներ տարբեր առարկաներից, որպեսզի երեխաները կրթական գործընթացներից չկտրվեին (2020թ-ի մարտ-մայիս. այս դեպքում ևս առկա են ձայնագրություններ):

- «Հայերենի պահպանում և տարածում» նախագծի շրջանակներում

    - Հայերենի անվճար ռեսուրսների պատրաստում՝ անգլերեն-հայերեն, ֆրանսերեն-հայերեն, ռուսերեն-հայերեն, իսպաներեն-հայերեն ...

    - Հայերենի անվճար ուսուցում էյ Ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոցի՝ տարբեր երկրներում բնակվող աշակերտների համար,

    - Գիտեմ չգիտեմ խմբի ստեղծում և վարում հայերենում ամենատարածված ուղղագրական սխալների շտկման նպատակով:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ՍՄԱՐԹ ԲԻԶՆԵՍ բջջային հավելվածի բազմատարր գործիքակազմի, տեղեկատվական հանդիպումների, դասընթացների և առցանց աջակցության միջոցով խթանել ձեռնարկատիրությամբ զբաղվելու ներուժ ունեցող բոլոր քաղաքացիների ձեռնարկատիրական հմտությունների զարգացումն առանց տարածքային, ժամանակային, ինչպես նաև որոշակի չափորոշիչներով պայմանավորված սահմանափակումների՝ դրանով իսկ նպաստելով ՀՀ-ում ձեռնարկատիրության և խելացի համակարգված տնտեսության զարգացմանը: Ի տարբերություն տարբեր դասընթացների, դրամաշնորհային և ինկուբացիոն ծրագրերի ՍՄԱՐԹ ԲԻԶՆԵՍ բջջային հավելվածը կարող է ուղեցույց հանդիսանալ անսահմանափակ թվով շահառուների համար և ուղղորդել նրանց ձեռնարկատիրական գործունեության ճանապարհին նաև այն նախագծի ավարտից հետո ցանկացած պահի մշտապես թարմացվող ռեսուրսներով:

Նախագծի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 11 առցանց տեղեկատվական հանդիպում 800-1,000 շահառուների հետ 10 մարզերի և Երևանի քաղաքացիների հետ (յուրաքանչյուր մարզի հետ 1 առցանց տեղեկատվական հանդիպում)՝ վերջիններիս ներկայացնելով ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար անհրաժեշտ հիմնական գիտելիքներ, տեխնոլոգիաներ, գործիքներ և ռեսուրսներ անմիջապես հանդիպումների ընթացում (ՍՄԱՐԹ ԲԻԶՆԵՍ բջջային հավելվածի շնորհիվ հնարավոր կլինի կարճ ժամանակահատվածում շատ տեղեկություններ փոխանցել մասնակիցներին), այնուհետև ինտերակտիվ հանդիպումների շրջափուլից հետո կազմակերպել առցանց աջակցության փուլ, որտեղ ցանկացողները կբարձրացնեն իրենց հուզող հարցերը և կստանան պարզաբանում, ուղղորդում, որոշ դեպքերում նաև մասնագիտական աջակցություն/խորհրդատվություն:

Ակնկալվում է, որ նախագծի ավարտից հետո նախագծի մասնակիցները կլինեն տեղեկացված ձեռնարկատիրական ոլորտի մասին, կկարողանան սկսել, կազմակերպել և ինքնուրույն շարունակել իրենց ձեռնարկատիրական գործունեությունը, ծանոթ կլինեն օգտակար գործիքների և տեխնոլոգիաների, որոնք կբարձրացնեն նրանց աշխատանքների արդյունավետությունը:

Գործողություններ

ՍՄԱՐԹ ԲԻԶՆԵՍ բջջային հավելվածն արդեն հիմնական մասով մշակված է և հասանելի օգտագործման համար Գուգլ Փլեյ հարթակում (https://play.google.com/store/apps/details?id=com.app.imvovlffg) և վեբ տարբերակով (ներկայումս զուգահեռաբար բարելավվում է, զարգացվում), սակայն այս փուլում անհրաժեշտություն կա նաև լրացուցիչ տեղեկատվական հանդիպումների, դասընթացների (աշխատարանների ձևաչափով) միջոցով աշխատել շահառուների հետ և օգնել օգտվել ծրագրից: Ծրագրի հիմնական փուլերը ներկայացված են ստորև Աշխատանքային պլանում:

Ժամանակահատված 15.10. 2021թ - 15.12.2022թ

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս		
			1	2	3
1	Նախապատրաստում • Հանրային իրազեկում նախագծի մասին • Մասնակիցների հավաքագրում • Հարթակի նախապատրաստում	Անուշ Կոստանյան Արև Ասատրյան Բիայնա Ամիրջանյան Լորետա Դումիկյան			
2	Տեղեկատվական հանդիպումներ (Յուրաքանչյուր մարզից 100 հոգի)	Անուշ Կոստանյան Լորետա Դումիկյան Արև Ասատրյան			
3	Առցանց աջակցություն	Անուշ Կոստանյան Արև Ասատրյան Բիայնա Ամիրջանյան Բիզնես փորձագետ Շուկայագետ			
4	Մոնիթորինգ/ գնահատում/ ամփոփում	Անուշ Կոստանյան Արև Ասատրյան Բիայնա Ամիրջանյան			

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Ծրագրի ուղղակի շահառուները ձեռնարկատիրությամբ հետաքրքրվող և արդեն զբաղվող անհատներն են հիմնականում ՓՄՁ-ների ղեկավարներ ՀՀ մարզերից և Երևանից: Շահագրգիռ կողմերն են պետությունը ի դեմս ԿԳՄՍ նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Էկոնոմիկայի նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, քանի որ ծրագրի և նրանում ներառված գործիքակազմի միջոցով հնարավոր կլինի ձևավորել <խելացի տնտեսություն>, կրթել անհամեմատ ավելի շատ թվով քաղաքացիների շատ քիչ ռեսուրսներով, աջակցել քաղաքացիներին ինքնազբաղվածության հարցում և նվազեցնել գործազրկությունը:

Ռիսկերի գնահատում

Նախագծի իրականացման խափանման ռիսկերը կապված են ֆորս մաժորային դեպքերի հետ, ինտերնետ կապի և էլեկտրաէներգիայի տևական և չնախատեսված խափանումների հետ: Ռիսկերի մեծ մասը կառավարելի է և հնարավոր է պարզապես տեղափոխել ծրագրի իրականացումը:

Ծրագրի աշխատակազմը

Ծրագրի իրականացման համար նախատեսված է հետևյալ աշխատակազմը.

- **Ծրագրի ղեկավար/համակարգող** Անուշ Կոստանյան, ով պատասխանատու է ծրագրի իրկանացման ընթացիկ աշխատանքների և նախագծի վերջնարդյունքի համար,
- **Ծրագրի օգնական** Արևիկ Ասատրյան, ով աջակցելու է ամբողջ աշխատակազմին տարբեր վարչական և կազմակերպչական ընթացիկ հարցերով,

- **Ծրագրի շահառուների հետ կապերի պատասխանատու** Բիայնա Ամիրջանյան, ով աջակցելու է ծրագրի շահառուների շրջանակները սահմանելու, նրանց հետ կապ հաստատելու, ծրագրի ընթացքում կապ պահպանելու և աջակցելու հարցերում:

- **SS աջակցություն.** Լորետա Դումիկյանը կաջակցի տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված հարցերում և՝ նախագծի կազմակերպման/իրականացման փուլում, և՝ ծրագրի մասնակիցներին տեխնիկական աջակցության, խորհրդատվության ընթացքում:

- **Բիզնես վերլուծաբան և շուկայագետ.** այս պահին հստակեցված չէ, թե կոնկրետ ում հետ ենք համագործակցելու, քանի որ սա կախված է ծրագրի ընթացքից. տեղեկատվական հանդիպումների ընթացքում գնահատելով մասնակիցների կարիքները և հաշվի առնելով բարձրացրած հարցերը՝ կհրավիրվեն այն փորձագետները և մասնագետները, որոնց աջակցությունն ավելի շատ կլինի: Փորձագետները ներգրավվելու են ժամավճարով, հետևաբար ամեն ինչ կկազմակերպվի նախատեսված բյուջեի շրջանակներում առանց գերածախսի, իսկ եթե մնացորդ լինի, ապա կվերադարձվի բյուջե:

- **Հաշվապահ.** ծրագրի հաշվապահական հաշվառումը կիրականցնի գործընկեր Պրոֆորիում ՍՊԸ-ն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
«Սմարթ բիզնես»

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող ծրագրի						
	Անվա-նումը	**Բովանդակությունը**	**Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**Պահանջվող գումարը (դրամ)**
1.	Սմարթ Բիզնես ֆջջային հավելվածի ակտիվացում Էփ Սթորում (AppStore) iOS օգտատերերի համար	Ապահովել ծրագրի հասանելիություն բոլոր շահառուների համար	Ձեռնարկել համապատասխան գործողություններ ծրագրի հրապարակման համար	Ծրագիրը հասանելի կլինի բոլոր շահառուներին.Հավելվածում ներդրված է վիճակագրության գործիք, որը ցույց է տալիս բոլոր օգտվողների թիվը	01.11.2021թ. (կապված է Էփլ (Apple) կազմակերպության կողմից Էփ Սթորում (AppStore) ծրագրի հաստատումից)	Անմիջապես հրապարակման հաստատումից հետո կներկայացվի բջջային հավելվածի հասցեն	106,171 դր (ֆին. նախահաշվի 2.6 և 2.8 կետեր. արժեք ԱՄՆ դոլարի փոխարժեքից կախված կարող է փոխվել)
2.	Նախապատրաստում	Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ քայլերի ձեռնարկում	1.Առցանց հարթակի նախապատրաստում 2.Շահառուների իրազեկում և հավաքագրում	Արդյունքը կերևա տեղեկատվական հանդիպումների ժամանակ:	01.11.2021թ.	10.11.2021թ Կներկայացվեն հաշիվներ և զեկույց կատարված աշխատանքների վերաբերյալ	461,600 դր
3.	Տեղեկատվական հանդիպումներ	Առցանց ուղիղ միացմամբ միացումներ շահառուների հետ	Առցանց հանդիպումների կազմակերպում	Նախատեսվում է 11 նմանատիպ հանդիպում , յուրաքանչյուր հանդիպմանը -100 շահառուի հետ 10 մարզերից և Երևանից (յուրաքանչյուր անգամ 1 մարզից). Ընդհանուր առմամբ 800-1,000 մարդ կստանան տեղեկություններ, ուղղորդում	10.12.2021թ.	15.12.2021 Կներկայացվեն մասնակիցների գրանցման թերթիկները, ձայնագրություններ հանդիպումներից, ինչպես նաև հնարավորություն կլինի միանալ առցանց ուղիղ միացմամբ միջոցառմանը	700,400

				ձեռնարկատիրության զբաղվելու համար			
4.	Բիզնես խորհրդատվություն փորձագետների կողմից	Մասնակիցները կկարողանան իրենց հարցերը ուղղել բիզնես/ֆինանսական փորձագետներին և շուկայագետին	Գործընթացի կազմակերպում	Հարցում մասնակիցներից, արդյոք ստացել են իրենց հացերի պատասխանները	14.12.2021թ	15.12.2021 Կտրամադրվեն համառոտ հաշվետվություններ մասնակիցների հետ փորձագետների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ	487,000 դր
5.	Մոնիթորինգ, ամփոփում և բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ներկայացում	Միջոցառման փակում	Արդյունքների ամփոփում/գնահատում	Վերլուծություն Հաշվետվությունների պատրաստում	14.12.2021թ	15.12.2021 Հաշվետվություն զեկույցի պատրաստում	0
	Ընդամենը 1,755.171 դրամ						
	ԱԱՀ՝ 351.034						
	Ընդամենը՝ 2,106.205						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Էյ Ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոց» ՍՊԸ ք. Երևան, Նոր Նորքի զ., Մոլդովական 25/2, բն. 10 Էլ. փոստ՝
aww@virtualschool.am

«ԱՅ ԴԻ բանկ»
Հ/Հ 11815012847800, ՀՎՀՀ00929827
Կատարողի ստորագրությունը
ՍՊԸ -ի տնօրեն՝
Անուշ Կոտանյան

/ստորագրություն/

Կ.Տ.

21.10.2021 ԵՔԴՄ- 11

Հավելված 2
ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու — Էյ Ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոց ՍՊԸ
Ծրագրի անուն — Սմարթ Բիզնես (SM'ART BU$INE$$)

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ						
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	2	132,000	264,000	132,000	396,000
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	2	140,000	280,000	-	280,000
1.3	Ծրագրի օգնական	ամիս	2	100,000	200,000	100,000	300,000
1.4	SS մասնագետ	ամիս	2	100,000	200,000	100,000	300,000
1.5	Շահառուների հետ կապի պատասխանատու ղեկավար	ամիս		100,000	200,000	-	200,000
1.6	Բիզնես վերլուծաբան	ամիս	1	150,000	150,000	-	150,000
1.7	Շուկայագետ	ամիս	1	120,000	120,000	-	120,000
	Ընդամենը Ա				1,414,000	1,746,000 որից համաֆինանսավորվող 332,000	
Բ	Ծրագրային ծախսեր						
2.1	Տեղեկատվական թռուցիկների տպագրություն	հատ	1,000	21.6	21,600		21,600
2.2	Իրազեկման արշավ	ամիս	2	20,000	40,000	20,000	60,000
2.3	Հաշվապահ	ամիս	2	20,000	40,000	20,000	60,000
2.4	Ծրագրի լուսաբանում (լրագրող)	ամիս	1	100,000	100,000		100,000
2.5	Հավելված Android	ամիս	2	130,000		130,000	130,000
2.6	Հավելված iOS	ամիս	2	29.100	58.200		342,650
2.7.	Հավելված անդրոիդ ՓլեյՍթոր (PlayStore)	ամիս	միանվագ	11,962		11,962	11,962
2.8	Հավելված iOS ԷփՍթոր (AppStore)	ամիս	միանվագ	47,371	47,371		47,371
2.9	Միացման հարթակ	ամիս	2	17,000	34,000	17,000	51,000
	Ընդամենը Բ				341,171	540,133դր որից 198,962դր համաֆինանսավորվող	
Ընդամենը					1,755,171	530,962	2,286,133
ԱԱՀ					351,034		
ԸՆԴԱՄԵՆԸ					2,106,205		

Դրամաշնորհառու Էյ Ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոց ՍՊԸ
Ծրագրի անուն Սմարթ Բիզնես (SM'ART BU$INE$$)
Ծրագրի տևողություն 2 ամիս[2]

Հ/Հ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**		
1.1	Ծրագրի ղեկավար	264,000	Պատասխանատու է ծրագրի համար
Ա2	**Ղեկավար անձնակազմի աշխատավարձ**		
1.1.1	Ծրագրի համակարգող	280,000	Համակարգելու է թիմի աշխատանքները
1.1.2	Ծրագրի օգնական	200,000	Աջակցելու է ընթացիկ գործընթացներում
1.1.3	SS մասնագետ	200,000	Աջակցելու է տեխնիկական հարցերում
1.1.4	Շահառուների հետ կապի պատասխանատու ղեկավար	200 000	Աջակցելու է շահառուների հետ կապ հաստատելու և պահպանելու համար
1.1.5	Բիզնես վերլուծաբան/Ֆինանսիստ	150,000	Տրամադրելու է մասնագիտական խորհրդատվություն մասնակիցներին, պատասխանելու է նրանց հուզող հարցերին
1.1.6	Շուկայագետ	120,000	Տրամադրելու է մասնագիտական խորհրդատվություն մասնակիցներին, պատասխանելու է նրանց հուզող հարցերին
	Ընդամենը Ա2	**1,150,000**	
	Ընդամենը Ա	**1,414,000**	
	Ծրագրային ծախսեր		
2.1	Տեղեկատվական թռուցիկների տպագրություն	21,600	Շահառուներին ծրագրի մասին տեղեկացնելու համար
2.2	Իրազեկման արշավ	40,000	Սոցիալական ցանցերում շահառուներին ծրագրի մասին տեղեկացնելու համար
2.3	Հաշվապահ	40,000	Ծրագրի հաշվապահությունը վարելու համար
2.4	Ծրագրի լուսաբանում (լրագրող)	100,000	Ծրագիրը լուսաբանելու համար
2.5	Հավելված iOS	58,200	Հավելվածի Անդրոիդ տարբերակը հասանելի է 2021թ. փետրվարից և շատ կարևոր է, որ այն հասանելի լինի նաև iOS բջջային հեռախոսների օգտատերերին (վերոնշյալը հնարավոր է ապահովել միայն Էփի Փայ (AppyPie) հարթակի Պլատինում փաթեթով. այլընտրանք չկա)

2.6	Հավելված iOS էփՍթոր (AppStore)	47,371	Հավելվածը հարթակում հրապարակելու համար
2.7	Միացման հարթակ	34,000	Հարթակը միացած է Էյ ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոցին և որպեսզի հնարավոր լինի յուրաքանչյուր հանդիպմանը 100 մասնակից ունենալ, անհրաժեշտ է բաժանորդագրվել Ֆրի Կոնֆերենս (FreeConference) հարթակի Պրո փաթեթին (այլընտրանք չկա):
	Ընդամենը Բ	341,171	
Գ	Գործուղում		
3.1			
	Ընդամենը Գ		
Դ	Վարչական ծախսեր		
4.1			
	Ընդամենը Դ		
Ընդամենը		1,755.171	
ԱԱՀ		351.034	
ԸՆԴԱՄԵՆԸ		2,106.205	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Էյ Ընդ Դաբլյու Դաբլյու վիրտուալ դպրոց» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորքի զ., Մոլդովական 25/2, բն.10
Էլ. փոստ՝ aww@virtualschool.am
«ԱՅ Դի բանկ»
Հ/Հ 11815012847800, ՀՎՀՀ00929827

Կատարողի ստորագրությունը
ՍՊԸ -ի տնօրեն՝
Անուշ Կոտանյան

/ստորագրություն/

Կ.Տ.